Արձանագրություն N 2
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Գազոնային խոտի սերմի ձեռքբերման
« ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/78» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստ

ք. Երևան 05.02.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Խ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Հարությունյան, Ա. Հազարապետյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. Տեղեկություններ « ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/78 ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Խ. Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ eauction.armeps.am կայքի միջոցով հրապարակված գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 31.01.2019թ.-ի ժամը 10:00-ը , իսկ հետադարձ աճուրդը սկսվել է 04.02.2019թ.-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

2. « ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/78 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Խ. Հակոբյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

h/h	Մասնակիցների անվանումը
1	Դանիելյան Մագթաղ ԱՁ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Խ. Հակոբյան)

3.1 Աճուրդի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/78 Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կենսահումուսի ձեռքբերում				
Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
Դանիելյան Մագթաղ ԱՁ	5000000	5000000	0 %	5000000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Խ. Հակոբյան)

4.1 Աճուրդն ամփոփելու պահի դրությամբ համակարգի կողմից ավտոմատ եղանակով ներկայացրած աճուրդի արդյունքների համաձայն՝ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում Դանիելյան Մագթաղ ԱՁ -ն, որպես բավարար գնահատված նվազագույն առաջարկ ներկայացրած միակ մասնակից:

4.2 Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա է հրավերով պահանջվող դիմում-հայտարարությունը և դա համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

4.3 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է բավարար:

5. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Խ. Հակոբյան)

5.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 06.02.2019թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

5.2. 06.02.2019թ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և որակավորման փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Խ. Հակոբյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 12.02.2019թ. ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Հանձնաժողովի նախագահ՝		Խ. Հակոբյան
Անդամներ՝		Ս. Մաքսապետյան
		Հ. Հարությունյան
Համակարգող՝		Ն. Կիրակոսյան